


## Երգչական ձայնի զարգացման հիմնախնդիրը երաժշտական կրթական հաստատություններում

*Բարեղամյան Մանե Ա.*

*Հայցորդ, Երաժշտության մանկավարժության ամբիոն,*

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0000-9822-5096>

[mbareghamyan@gmail.com](mailto:mbareghamyan@gmail.com)

ՀՏԳ՝ 5527; EDN: PKSFOD

DOI: 10.58587/18292437-2024.6-147

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** հիմնախնդիր, երգչական ձայն, զարգացում, մասնագիտական պատրաստություն, երաժշտական լեզու, ձայնի պահպանում, մշակութային երևույթ, ուսանող, ձայնավարժություններ, միջոցներ, ձևեր

### Проблема развития певческого голоса в музыкальных образовательных учреждениях

*Барегамян Мане А.*

*Соискатель, Кафедра музыкальной педагогики,*

*Армянский государственный педагогический университет имени Х.Абовяна (Ереван, РА)*

**Анотация.** В статье рассматривается проблема развития певческого голоса в музыкальных образовательных учреждениях. Утверждается, что армянская музыка как культурное явление зародилась во II тыс. до н.э. Оно исходит от глубоких и глубинных корней, от ритуальной музыки, сладких песен, которые наиболее адекватно отражают общественное восприятие, образ мышления и жизнь армянской национальной общины. Иными словами, музыка сопровождала армянский народ с начала его формирования и по сей день, как действенное средство выражения и сохранения национальной идентичности. Одновременно с формированием языка были заложены основы музыкального языка.

Вышеизложенное дает нам основание утверждать, что проблема развития певческого голоса в Армении имеет давнюю историю. С V века музыка была обязательным предметом в армянских школах, ее преподавали также в высших школах и университетах (в Гладзоре, Татеве, Сисе, Капосе и т.д.).

Отмечается, что в условиях масштабных образовательных реформ и новых стандартов сегодня в музыкальных образовательных учреждениях стала весьма актуальной проблема развития и поддержания певческого голоса студентов, для решения которой мы предлагаем в программах предметов профессиональной подготовки, включить ряд средств и форм развития и поддержания голоса которые представлены в статье.

**Ключевые слова и словосочетания:** проблема, певческий голос, развития, профессиональная подготовка, музыкальный язык, сохранения голоса, культурное явление, студент, голосовая тренировка, средства, формы

### The Problem of the Development of the Singing Voice in Musical Educational Institutions

*Bareghamyan Mane A.*

*Petitioner, Chair of music pedagogy,*

*Kh. Abovyan Armenian State Pedagogical (Yerevan, RA)*

**Abstract.** The article examines the problem of the development of the singing voice in musical educational institutions. It argues that Armenian music, as a cultural phenomenon, originated in the 2<sup>nd</sup> millennium BCE. It stems from profound and ancient sources, including ritualistic music and melodic songs that most effectively reflect the public perception, mindset, and life of the Armenian national community. In other words, music has accompanied the Armenian people from the beginning of their formation to the present day, serving as a vital means of expressing and preserving their national identity. Alongside the development of the Armenian language, the foundation of its musical language was also established.

The above provides grounds to assert that the issue of developing the singing voice in Armenia has a long-standing history. Since the 5<sup>th</sup> century, music has been a compulsory subject in Armenian schools and was also taught in prestigious schools and universities, such as Gladzor, Tatev, Sis, Kapos and others.

It is noted that in the context of large-scale educational reforms and the introduction of new standards, the issue of developing and maintaining students' singing voices has become particularly relevant in contemporary musical educational institutions. To address this issue, we propose including a series of methods and approaches for voice processing, development, and maintenance in the curricula of professional subjects, as outlined in the article.

**Keywords & phrases:** problem, singing voice, development, professional training, musical language, voice preservation, cultural phenomenon, student, voice training, means, forms

Հայ երաժշտությունը՝ որպես մշակութային երևույթ, սկզբնավորվել է մ.թ.ա. II հազարամյակում: Լեզվի ձևավորմանը զուգընթաց դրվել է նաև երաժշտական լեզվի հիմքը:

Հայ երաժշտությունը՝ գալիս է խորը և վճիռ ակունքներից՝ ծիսապաշտամունքային երաժշտաձևերից, գողթան երգերից. որոնք ամենից համարժեք են արտացոլում հայ ազգային հանրության աշխարհակայումը, մտածելակերպն ու կյանքը: Այսինքն՝ երաժշտությունն ուղեկցել է հայ ժողովրդին իր ձևավորման սկզբնական շրջանից սկսած մինչև մեր օրերը՝ որպես ազգային ինքնության դրսևորման և պահպանման կենսունակ միջոց:

Հայ ժողովրդի կյանքի պատմական դրվագների բազմաթիվ օրինակներ կան մեր առասպելներում և էպոսում: Դրանք ոչ միայն պատմվել են, այլև երգվել են և երգերի միջոցով հասել մեզ: Օրինակ, Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշես Ա թագավորի (մ.թ.ա. II դ. սկիզբ) հարսանեկան հանդեսի նկարագրությունը:

Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ Արտաշեսի և նրա որդիների մասին պատմությունը ներկայացնելիս գրում է. «Այս բանը ճշմարտապես պատմում են և թվեցաց երգերը, որ ինչպես լսում եմ, ախորժակով պահել են գինեխոս Գողթն գավառի կողմի մարդիկ...» [2, էջ 118]:

Ավելի ուշ շրջանում Հայաստանում լիովին ձևավորվում է ժողովրդի երաժշտության որակական «ինքնօրինակությունը» [3, էջ 46], երաժշտական լեզուն իր առանձնահատկություններով և ժանրային ձևերով, որոնք հիմք են դառնում հայ երաժշտական արվեստի հետագա զարգացման համար:

Հենց այս շրջանում է երաժշտական լեզուն ձևավորվում իր առանձնահատկություններով, տարբերակվում են ժանրերն ու ձևերը, որի հիման վրա էլ ապագայում զարգացել է հայ երաժշտական արվեստը:

Վերոբերյալը հիմք է տալիս մեզ պնդելու, որ երգչական ձայնի զարգացման հիմնախնդիրը Հայաստանում ունի վաղնջական պատմություն: Սկսած 5-րդ դարից արդեն Հայաստանի դպրոցներում երաժշտություն առարկան պարտադիր է եղել, այն ուսուցանվել է նաև բարձր տիպի դպրոցներում և համալսարաններում (Գլաձորում, Տաթևում, Մսում, Կապոսում և այլուր):

Եվ այսօր էլ ինչպես երաժշտական ուսումնական հաստատություններում, այնպես էլ հանրակրթական դպրոցներում սովորողների երգչական ձայնի զարգացման և պահպանման հիմնախնդիրը կրթական լայնածավալ բարեփոխումների և նոր չափորոշիչների համատեքստում խիստ արդիական է դարձել:

Երգչական ձայնի ձևավորման հիմնախնդիրը մանկավարժական մեթոդաբանության

և մեթոդիկայի ոլորտում հետաքրքիր ուղղություն է: Այն կապված է մարդու ֆիզիոլոգիական կարողությունների, մարմնի կառուցվածքի և մկանային համակարգի աշխատանքի հետ:

Այդ գործընթացի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է երաժշտության ուսուցչի վոկալ կարողությունից, որը մասնագիտական գործունեության կոնկրետ պայմաններում ունի իր առանձնահատկությունները, նպատակներն ու խնդիրները:

Այսօր, հաշվի առնելով «Երաժշտություն» առարկայի կարևորությունը, նրա դասավանդման առանձնահատկությունները, ապագա մասնագետից, ուսուցչից պահանջվում սեփական ձայնի որակի պարամետրերի ապահովում, ինչպես նաև սովորողների ձայնի մշակման և պահպանման հատուկ գիտելիքների իմացություն, խոսքային, վոկալ-խոսքային և վոկալ-մանկավարժական գործունեության կարողություններ և հմտություններ:

Այսինքն՝ երեխաների ձայնի հետ աշխատելու համար անհրաժեշտ ինքնատիրապետումից և ձայնի ինքնաուղղման կարողությունից բացի, ուսուցչի մասնագիտական պատրաստության բովանդակությունը պետք է ներառի ոչ միայն վոկալ-տեսական, մեթոդական, վոկալ-խոսքային, այլև հոգեբանամանկավարժական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:

Ներկայումս երաժշտական կրթական հաստատություններում առկա է երաժշտության ուսուցչի մասնագիտական պատրաստության մեթոդաբանության մշակման սուր խնդիր՝ ներառյալ նրա ձայնային աշխատանքի հիմնական տեսանկյունների նախապատրաստումը, որպես կոնկրետ մասնագիտական գործունեությանն ուղղված վոկալ վարպետության ձևավորման հիմք:

Երաժշտության ուսուցիչների պրակտիկ գործունեության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանց մեծամասնությունը մասնագիտորեն և ֆիզիկապես չեն կարողանում հաղթահարել իրենց հանձնարարված վոկալ առաջադրանքները, ինչի պատճառով կտրուկ իջնում է նրանց վոկալ վարպետության մակարդակը, ուրիշ գումարվում է նաև ձայնային ապարատի ֆունկցիոնալ խանգարումները և հիվանդությունները:

Ելնելով վերոբերյալից կարելի է պնդել, որ որակյալ երաժշտական կրթությունը մեծապես կախված է երաժշտության ուսուցչի մասնագիտական պատրաստության, նրա ձայնի զարգացման և պահպանման մակարդակներից, ինչը անհրաժեշտաբար պահանջում է ապագա մասնագետների մասնագիտական պատրաստության մեթոդաբանության և արդյունավետ մեթոդիկայի մշակում և ներդրում ինչպես բուհե-

րում, այնպես էլ միջին մասնագիտական երաժշտական կրթական հաստատություններում:

Անառարկելի է, որ բուհերի երաժշտական բաժինների ուսանողների երգչական ձայնի մշակման, զարգացման և պահպանման հիմքը երգիչ-կատարողների վոկալ կրթության մեթոդաբանությունն ու մեթոդիկան է, որը, մեր կարծիքով, ենթադրում է ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների ճիշտ համահարաբերակցության կիրառում, երգացանկի որոշարկում, վոկալ և տեխնիկական հմտությունների զարգացման մանկավարժական պայմանների ապահովում՝ նրանց հետագա մասնագիտական արդյունավետ վոկալ գործունեության իրականացման նպատակով:

Մենք այն համոզման ենք, որ ուսանողների վոկալի ձևավորման, զարգացման և պահպանման գործում կատարողական վարպետության կատարելագործման հետ միասին, ձայնի զարգացմանը զուգընթաց, անհրաժեշտ է ներառել տեսական, մեթոդական, խոսքային և վոկալ-խոսքային, ձայնով ինքնուրույն աշխատելու, մասնագիտական սթրեսին ձայնի դիմադրության պարապմունքներ և ձայնավարժություններ:

Ուսանողների ձայնի զարգացումը երաժշտական կրթական հաստատություններում սովորաբար հասկացվում է որպես ուժեղ մասնագիտական ձայնային հմտությունների զարգացում:

Ըստ Ի. Ս. Կոչնևայի և Ա. Ս.Յակովլևայի՝ «*Ձայնադրամը ձայնի այն որակների զարգացման գործընթացն է, որոնք անհրաժեշտ են դրա մասնագիտական օգտագործման համար: Ձայնը կարող է օգտագործվել բենսկան աշխատանքի, հռետորության կամ վոկալ արվեստի այս կամ այն ժանրում երգելու համար: Մարզված ձայնը աչքի է ընկնում մեծ տոկոսությամբ, գեղեցիկ տեսքով, կայունությամբ, մեծ ուժով և դիսպլազիայով*» [6, էջ 51]:

Լ. Բ. Դմիտրիևի կարծիքով. «*Ձայնի զարգացման հաջողությունը կախված է ուսուցչի անհատական հարմարումների, հմտությունների և կարողությունների մշակելու, առաջարկելու և զարգացնելու կարողությունից՝ խթանելով ձայնի արտադրության լավագույն որակը և ուսանողի կարողությունը՝ գիտակցաբար ձևավորելու և համախմբելու այդ հմտությունները*» [5]:

Հաշվի առնելով երաժշտության ուսուցչի վոկալային հմտությունների առկայության կարևորությունը և դրանք զարգացնելու անհրաժեշտությունը, մասնագիտական գործունեության առանձնահատկությունները և կրթական գործընթացի պայմանները՝ մենք մասնագիտական առարկաների ծրագրերում առաջարկում ենք ներառել ձայնի մշակման, զարգացման և պահպանման հետևյալ միջոցները՝

- որովայնային շնչառության, օդի գրազետ արտաշնչման մշտական կազմակերպում,

- ձայնային առողջության պահպանման, գերձանրաբեռնվածությունից խուսափելու կանոնների իմացություն,

- ձայնավարժությունների համակարգված իրականացում,

- ձայնի արտադրության և ձայնի ուղղորդման տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում,

- խոսքի օգտագործման, վոկալ-կատարողական ռեժիմների պահպանում,

- վոկալ երաժշտության կատարման ընթացքում ձայնի զարգացման և ձևավորման տարբեր ձևերի կիրառում,

- ձայնի զարգացման և պահպանման ինքնամարզումներ,

- ռեֆլեքսիվ մոտեցում ձայնի զարգացման ու պահպանմանը:

Երգչական ձայնի ձևավորումը անձի զարգացման տարբեր փուլերում տարբերվում է ընդհանրապես մարդու ձայնարտաբերումից: Այն պահանջում է լուրջ մասնագիտական մոտեցում և երկարաժամկետ աշխատանք: Երգեցողություն դասավանդող ուսուցիչը պետք է հստակ գիտակցի, որ գործ ունի մարդու ճակատագրի և նրա ֆիզիոլոգիկական առանձնահատկությունների հետ: Երգչական ձայնի ձևավորումն սկիզբ է առնում փոքր շնչառական և ձայնարտաբերման վարժություններից, որոնք օգնում են ձայնալարին տատանվել ճիշտ հաճախականությամբ: Սկզբնական փուլում այն հանդիսանում է, որպես մկանի «մերսում» և ակտիվացում:

Առանձնակի ուշադրություն է դարձվում որովայնային շնչառությանը, որովհետև օդի գրազետ արտաշնչման կազմակերպումը նպաստում է ձայնալարի ճիշտ տատանմանը: Կան բազմաթիվ մշակված ձայնավարժություններ, որոնց միջոցով երաժշտության ուսուցիչը սկսում է մարզել սովորողի ձայնը: Վարժություններն ընտրելիս, կարևոր է ուշադրություն դարձնել սովորողի տարիքային առանձնահատկություններին և ֆիզիկական կարողություններին: Այս աշխատանքին պետք է մոտենալ համբերատար, որովհետև կոկորդի մկանները սկսում են աշխատել նոր ռեժիմով, որին հարմարվելու համար ժամանակ է հարկավոր:

Ըստ Նունե Մուրադյանի՝ «*Մինչև ստեղծագործության կատարման անցնելը, նշանակալի դեր ունի ձայնավարժանքը: Այս կերպ կոկորդի մկանները ստանում են աշխատանքային տեսք: Երգչի համար ձայնավարժությունը նույնն է, ինչ սպորտմենի համար մարզանքը*» [1, էջ 72]:

Ձայնավարժություններ կատարելիս պետք է հետևել պարզից բարդ գնալու կանոնին: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի Նունե Մուրադյանի հեղինակած երգիչ-կատարողների «Ուսումնական ձեռնարկ»-ում ներկայացված

ձայնավարժությունների հաջորդականությունը, որը մեթոդական մեծ օգնություն է երաժշտության ուսուցիչներին: Դրանք օգնում են առանց հավելյալ ձանրաբեռնումների մարզել ձայնը, զարգացնել ու մեծացնել այն, աշխատել ճիշտ շնչառության և արտաբերման վրա:

Երգչի կատարողական կարողությունների և ձայնի զարգացման հարցում դրական ազդեցություն կարող է ունենալ արիաներից, երգերից կամ շարականներից փոքրիկ հատվածների կատարումը՝ որպես ձայնավարժություն:

Որպես ձայնավարժության փայլուն օրինակ՝ կարող ենք դիտարկել Գրիգոր Նարեկացու «Հավուն-հավուն»-ը, որը հարության տաղ է և հատկապես կատարվում է Մուրբ պատարագի ժամանակ:

*Հաւուն հաւուն արթնացեալ դիտելով զհեթանոսս:*

*Չայնէր, ձայնէր տատարակին, սիրասնունդ սիրելոյն:*

*Դարձիր, դարձիր սոմնացիդ, ընդ վիմին հովանեալ:*

*Եկ, հարսնուհիդ, ի լերանց ընծուց դաշտաց այծեմանց:*

Հարկ է նշել, որ Նարեկացու տաղերը չափազանց հարմարավետ են կատարողական արվեստի համար: Դրանք կարող ենք օգնել զարգացնել ձայնը, ձայնատարությունը, պահել կանտիլենան և ձայնը պահպանել հնարավորինս բնական, առանց ոճաբանական փոփոխությունների:

Դիտարկելով տաղը՝ որպես ձայնավարժություն, տեսնում ենք, որ դրանում չկան մեծ թռիչքներ: Չայնամկանային ճիշտ աշխատանքի համար այս ստեղծագործությունը չափից ավելի հարմարավետ է, այն աստիճանաբար տաքացնում է մկանները, ստիպում երգչին այն երգել մեկ շնչում, համակցված, լեզատոյով՝ հնչեցնելով ցանկացած ֆորշլագ (խաղիկ): Այն օգնում է երգչին զարգացնել կանտիլենային երգեցողությունն ու մեծացնել շունչը: Այս տաղը հարկավոր է երգել «ա,ե,ի,օ,ու» հնչյուններով, «ծորացող» ձայնով, հանգիստ և դանդաղ: Կատարման ժամանակ անհրաժեշտ է հետևել ստեղծագործության ճիշտ տեմպին, ռիթմիկ կարողությունները զարգացնելու համար ևս:

Որպես ձայնավարժության օրինակ՝ կարելի է բերել Կոմիտասի «Չինար ես» երգը: Եթե ուշադիր դիտարկենք խոսքերը՝ «Չինար ես, կեռանալ մի» և այս նախադասությունից հանենք բաղաձայն հնչյունները, կմնա «Ի,Ա,ե,ե,Ա,Ա,Ի» ձայնավորային հաջորդականությունը:

Ըստ Դ.Կ. Վիլսոնի «կան ձայնարտաբերման դիրքեր: Այսինքն ցանկացած ձայնավոր ունի իր արտաբերման դիրքը և բերանի բացվածքի չափը, որը պարտադիր է պահել երգելիս» [4]:

«Չինար ես»-ի ձայնավոր հնչյունների հաջորդականությունը լիովին հարմար է ձայնը ճիշտ արտաբերելու և ձայնալարերը ամբողջական հպման դիրքի բերելու համար:

Այս հաջորդականությունը երգելիս, ձայնալարերը հավում են ամբողջությամբ և օդի դուրս մղումը լինում է հավասարաչափ, որը նպաստում է կանտիլենային երգեցողության զարգացմանը:

**ՉԻՆԱՐ ԵՍ**

Ձի - նար ես, կե - ա - նա՛լ մի, յա՛ր, յա՛ր,  
 յա՛ր, մեր դըր-նեց նե - ա - նա՛լ մի,  
 յա՛ր, յա՛ր, յա՛ր, յա՛ր, նա նա՛յ, նայ նա՛յ,  
 նա՛յ, նա՛յ, նայ նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ

Իմ դիրքորշումը հաստատում է նաև Վ.Պ. Մորոզովի այն տեսակետը, որ. «երգարվեստի ռեզոնանսային տեսության հիմնական դրույթների կրթական գործընթացում կիրառումը հնարավորություն է տալիս զարգացնել երգչախմբային, ժամանակակից վոկալ, ժողովրդական, եկեղեցական ստեղծագործությունների կատարման մասնագիտական կարողունակություններ և հմտություններ, ինչպես նաև խոսքի ստեղծագործական բոլոր տեսակները» [7, էջ 320]:

Այսպիսով, ձայնի զարգացումը կապված է վոկալ ապարատի աշխատանքում մասնագիտական նոր ռեժիմի հաստատման, աշխատանքի գործընթացում ավտոմատացված նոր շարժիչ կարողությունների և վոկալ հմտությունների զարգացման հետ:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. **Մուրադյանի Ն.** Երգիչ կատարող: Ուսումնական ձեռնարկ: – Երևան, 2015. – 199 էջ:
2. **Խորենացի Մ.** Պատմություն հայոց: – Երևան, «Հայաստան» հրատ., 1968. – 418 էջ:
3. **Քուչնարյան Ք. Ս.** «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր: – Երևան, Ամրոց գրուպ, 2008. – 512 էջ:
4. **Вильсон Д. К.** Нарушения голоса у детей / Пер. с англ. А. В. Недвецкого. – Москва: Медицина, 1990. – 446, [1] с.
5. **Дмитриев Л. Б.** Основы вокальной методики. – М.: Музыка, 1968.-675 с.
6. **Кочнева И. С., Яковлева А. С.** Вокальный словарь. – Л.: Музыка, 1986. – 70 с.
7. **Морозов В. П.** Искусство резонансного пения. – М.: МГК им. П.И. Чайковского, ИП РАН, Центр Искусство и наука, 2008. – 592 с.

Շճան/Հանձնվել է՝ 22.11.2024  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 07.12.2024  
 Принята/Ընդունվել է՝ 12.12.2024